Հավելված N 3
ՀՀ կառավարության 2006 թվականի
նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման

Ձև

# ՀԱՅՏ

## Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանումը** | *Քարաշեն և Խնածախ բնակավայրերում խաղահրապարակի և ժամանցային կենտրոնի կառուցում /հիմնում/* |
| **Մարզ** | Սյունիք |
| **Համայնքը /համայնքները** | *Տեղ համայնք: Բնակավայրեր՝*<br>*1. Տեղ*<br>*2. Արավուս*<br>*3. Կոռնիձոր*<br>*4. Քարաշեն*<br>*5. Խնածախ*<br>*6. Վաղատուր*<br>*7. Խոզնավար* |
| **Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից** | *Տեղ համայնք՝*<br>*Քարաշեն բնակավայր՝ Երևանից 250կմ, Կապանից 96 կմ*<br>*Խնածախ բնակավայր՝ Երևանից 271 կմ, Կապանից 117 կմ* |
| **Համայնքի /բնակավայրի բնակչությունը** | *Տեղ համայնք՝ 5470 մարդ,*<br>*Քարաշեն բնակավայր՝ 544 մարդ*<br>*Խնածախ բնակավայր՝ 555 մարդ* |
| **Սահմանամերձ համայնք/բնակավայր** | *Համաձայն ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի 17-ի «ՀՀ սահմանամերձ համայնքների ցանկը հաստատելու մասին» N 713 որոշման թիվ 1 հավելվածով հաստատված ցանկի Տեղ համայնքի բոլոր յոթ բնակավայրերը հանդիսանում են սահմանամերձ:* |
| **Բարձր լեռնային համայնք /բնակավայրի** | — |
| **Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն** | Այո<br>*2021թ մարտի 19*<br>*N 8-Ա ավագանու որոշում* |
| **Համայնքի և ծրագրի իրականացվող բնակավայրի/բնակավայրերի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ** | *Տեղ համայնքի Տեղ, Կոռնիձոր, Արավուս և Քարաշեն բնակավայրերում ջրամատակարարումն իրականացվում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից: Այս 4 բնակավայրերում ջրամատակարարումը կախված է տարվա եղանակից: Սակավաջուր ամիսներին կամ երաշտի ժամանակ բնակիչները* |

| | |
|---|---|
| տեղեկատվություն՝ հստակ նշելով՝<br><br>- ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տևողությունը,<br><br>- գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը,<br><br>- ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը,<br><br>- լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ | *ջուր են ստանում ամսական 15 օր, օրական 5 ժամ: Մյուս երեք բնակավայրերում ջրամատակարարումը համայնքային է: Խոզնավար և Վաղատուր բնակավայրերում բնակիչների 99,2%-ի ջրամատակարարումն իրականացվում է շուրջօրյա: Խնածախ բնակավայրում բնակիչները ջուր են ստանում օրական 2 ժամ:*<br><br>*Տեղ համայնքում ջրահեռացման համակարգից օգտվում են միայն Կոռնիձոր բնակավայրում՝ 70,2% և Քարաշեն բնակավայրում՝ 88,7%:*<br><br>*Տեղ համայնքի բոլոր բնակավայրերի բնակչության 100% համար ստեղծված են գազամատակարարումից օգտվելու պայմաններ:*<br><br>*Տեղ համայնքում ոռոգման համակարգից օգտվելու հնարավորություն առկա է դրա անհրաժեշտությունն ունեցող բնակչության 1,2%-ի մոտ:*<br><br>*Տեղ համայնքում ոռոգման ենթակա գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 1027,2 հա, որից փաստացի ոռոգվում են 120 հա, այսինքն՝ 11,68%:*<br><br>*Տեղ համայնքում փողոցային լուսավորության համակարգ առկա է ընդհանուր փողոցների 90%-ում: Լուսավորության համակարգից օգտվող փողոցների 77,3% լուսավորությունը ԼԵԴ լուսավորություն է, 22,7%-ը՝ նեոնային: Առաջիկա մի քանի ամիսների ընթացքում համայնքի ամբողջ փողոցային լուսավորությունը կլինի ԼԵԴ լուսավորություն:* |
| Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը | *Տեղ համայնքը Սյունիքի մարզի սահմանամերձ համայնքներից է և գտնվում է Գորիս քաղաքից 20կմ հեռավորության վրա: Համայնքի խոշորացման արդյունքում Տեղ համայնքը միավորում է Տեղ, Արավուս, Կոռնիձոր, Քարաշեն, Խնածախ, Վաղատուր և Խոզնավար գյուղերը: Ունի 5400 բնակիչ:*<br>*Քարաշեն և Խնածախ գյուղերը համայնքի յոթ գյուղերից են, գտնվում են Մ2 մայրուղու հարևանությամբ և նպաստավոր պայմաններ ունեն զբոսաշրջության զարգացման համար, սակայն բնակիչների սոցիալ-մշակութային և ժամանցային հնարավորությունները բացակայում են: Գյուղերում անհրաժեշտ է լավ կահավորված ժամանակակից խաղահրապարակներ, որը կապահովի երեխաների ժամանցը:*<br>*Այս ծրագրով նախատեսվում է հիմնել խաղահրապարակ-ժամանցի կենտրոն՝ խաղասարքերով, լողավազանով և շատրվանով, որը կապահովի սոցիալ-մշակութային կյանքի աշխուժացում:*<br>*Լողավազանն ու խաղասարքերը կապահովի երեխաների հետաքրքիր ժամանցը, իսկ շատրվանները իրենց գեղեցկությամբ էլ ավելի վայելուչ տեսք կհաղորդեն, իսկ հանգստյան օրերին կկազմակերպվեն համերգ-* |

| | |
|---|---|
| | *միջոցառումներ, որոնք արդեն նպատակ կունենան փոքր-ինչ թոթափել բնակիչների սոցիալական ծանր բեռն ու լարվածությունը: Կձևավորվի նոր ենթամշակույթ և ծնողները ստիպված չեն լինի երեխաների ժամանցը կազմակերպելու համար նրանց տեղափոխել Գորիս:*<br><br>*Կստեղծվի հաճելի և տրամադրող մթնոլորտ, որտեղ կկարևորվի «հաճելին օգտակարի հետ» համատեղելու գաղափարը:* |
| **Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին** | *1. Կստեղծվի 4 նոր հիմնական աշխատատեղ*<br>*2. Ծնողները հնարավորություն կունենան երեխաների ժամանցը կազմակերպել գյուղերում*<br>*3. Համայնքը հնարավորություն կունենա հյուրընկալելու նոր մշակութային միջոցառումներ*<br><br>*Ծրագրի բարեհաջող կատարման արդյունքում պլանավորվում է ժամանցի կենտրոնին կից բացել լողի և նետաձգության խմբակներ:* |
| **Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները** | *Ծրագրի վերջնական արդյունքին հասնելու համար անհրաժեշտ է բարեկարգել Քարաշեն բնակավայրի 10րդ փողոց թիվ 16 հասցեում և Խնածախ բնակավայրի 5-րդ փողոց թիվ 4 հասցեում գտնվող 300մ² տարածքը, այնուհետև 50ք/մ տարածքում կառուցել լողավազան, իսկ լողավազանի ներսում կառուցել գեղեցիկ շատրվաններ՝ նորագույն մոտեցումներով և վերջնական փուլում տեղադրել խաղասարքերն ու զրուցասրահը, ինչպես երևում է նկարներում, որի արդյունքում էլ վերջնական պատրաստ կլինի խաղահրապարակն ու ժամանցային կենտրոնը:* |
| **Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի** | *Ծրագրի իրականացումը դրական ազդեցություն կունենա համայնքային սեփականության իրավունքով պատկանող միջոցների արժեքի վրա, մասնավորապես վայրը, որտեղ կառուցվելու է խաղահրապարակ:*<br><br>*Ժամանցային կենտրոնը սեփականության իրավունքով պատկանում է համայնքին:*<br><br>*Նշեմ նաև, որ ծրագրով նախատեսվող բոլոր ծախսերը կապիտալ բնույթի ծախսեր են:* |
| **Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա** | *Ծրագրի շահառուներ են հանդիսանում Տեղ խոշորացված համայնքի թվով 5470 բնակիչները, հյուրերը և Տեղ ժամանած բոլոր զբոսաշրջիկները:*<br>*Քարաշեն բնակավայրը, որտեղ կառուցվելու է խաղահրապարակ-ժամանցային կենտրոնը մոտ 800մ հեռավորության վրա է գտնվում զբոսաշրջային կենտրոն և պատմամշակութային ժառանգություն համարվող Սուրբ Խաչից, Խնածախ բնակավայրը, որտեղ նույնպես կառուցվելու է խաղահրապարակ-ժամանցային կենտրոնը մոտ 400մ հեռավորության վրա է գտնվում զբոսաշրջային կենտրոն և պատմամշակութային ժառանգություն համարվող 19-րդ դարի Սուրբ Հռիփսիմե եկեղեցուց,ինչպես նաև հինավուրց քարանձավներից և հին գյուղատեղից, որը կապահովի նաև* |

<table>
<tr><td></td><td>զբոսաշրջիկների երեկոյան ժամանցն ու հանգիստը: Քարաշեն և Խնածախ բնակավայրեր տարեկան այցելում է մոտ 2000 զբոսաշրջիկ:<br>Այս ծրագրի քույր-զբոսաշրջային այլ ծրագրերի կատարման արդյունքում կանխատեսվում է, որ մինչև 2023թ-ը զբոսաշրջիկների թիվը կինգապատկվի՝ հասնելով 5000-ի:</td></tr>
<tr><td>Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը</td><td>Ծրագրի իրականացման արդյունքում կստեղծվի 4 նոր հիմնական աշխատատեղ: Ինչպես նաև ժամանակավոր 40 նոր աշխատատեղ շինարարության ընթացքում:<br><br>Հետագայում լողի և նետաձգության խմբակների բացումով կստեղծվի ևս 8 աշխատատեղ,որոնք ներառելու են՝<br><br>-Խաղահրապարակի մշակութային պատասխանատու<br><br>-Հավաքարար-2<br><br>-Լողի խմբակավար-4<br><br>-նետաձգություն -4</td></tr>
<tr><td>Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը</td><td>Նախորդ տարվա բյուջեն՝ 227570300 ՀՀ դրամ.
<table>
<tr><th></th><th>Պլանը</th><th>Փաստացին</th><th>Տոկոսը</th></tr>
<tr><td>Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները<br>այդ թվում՝</td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>-Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝</td><td>227570300</td><td></td><td></td></tr>
<tr><td>- Սեփական եկամուտներ</td><td>65240480</td><td></td><td></td></tr>
<tr><td>-Ֆոնդային բյուջեի եկամուտներ</td><td>31928935</td><td></td><td></td></tr>
<tr><td>Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,<br>որից՝</td><td>259999235</td><td></td><td></td></tr>
<tr><td>- Վարչական բյուջեի ծախսեր</td><td>227570300</td><td></td><td></td></tr>
<tr><td>-Ֆոնդային բյուջեի ծախսեր</td><td>31928935</td><td></td><td></td></tr>
<tr><td>Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը, որից՝</td><td>31928935</td><td></td><td></td></tr>
<tr><td>- Ճանապարհաշինություն</td><td>8400000</td><td></td><td></td></tr>
<tr><td>- ջրամատակարարում</td><td>20284000</td><td></td><td></td></tr>
<tr><td>- փողոցային լուսավորություն</td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>- գյուղատնտեսություն</td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>-մշակույթ</td><td>1800000</td><td></td><td></td></tr>
<tr><td>-նախադպրոցական կրթություն</td><td>1449935</td><td></td><td></td></tr>
</table></td></tr>
<tr><td>Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն</td><td>275833000 ՀՀ դրամ.
<table>
<tr><th></th><th>Պլանը</th></tr>
</table></td></tr>
</table>

| | |
|---|---|
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում*** *այդ թվում՝* | |
| *- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝* | 238021700 |
| *- սեփական եկամուտներ* | 75360000 |
| *- Ֆոնդային բյուջեի եկամուտներ* | 37812000 |
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,*** *որից՝* | |
| *- Վարչական բյուջեի ծախսեր* | 275833000 |
| *-Ֆոնդային բյուջեի ծախսեր* | 37812000 |
| ***Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը****, որից՝* | |
| *-ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ* | 8400000 |
| *-ջրամատակարարում* | 20284000 |
| *-մշակույթ* | 1800000 |
| *-նախադպրոցական կրթություն* | 1444935 |
| - | |

**Համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը**

275833000 ՀՀ դրամ.

-

| | Ծրագրի իրականացման տարի | Ծրագրի իրականացման տարվան հաջորդող տարի |
|---|---|---|
| **Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտներ՝ ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրի,** այդ թվում՝ | | |
| - Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝ | 238021700 | |
| - Սեփական եկամուտներ | 75360000 | |
| - Ֆոնդային բյուջեի եկամուտներ | 37812000 | |
| **Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրի,** որից՝ | | |
| - Վարչական բյուջեի ծախսեր | 275833000 | |
| - Ֆոնդային բյուջեի ծախսեր | 37812000 | |
| **Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսերը՝ ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրի, որից՝** | | |
| - Ճանապարհաշինություն | 8400000 | |
| - ջրամատակարարում | 20284000 | |
| - փողոցային լուսավորություն | | |
| - գյուղատնտեսություն | | |
| -մշակույթ | 1800000 | |

| | | | |
|---|---|---|---|
| | -նախադպրոցական կրթություն | 1449935 | |
| | **Ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի համար նախատեսված ծախսերը, ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրի, այդ թվում՝**<br>*/ներկայացնել սուբվենցիոն ծրագրերի համար համայնքի ֆոնդային բյուջեից նախատեսված գումարները՝ ըստ ոլորտների/* | | |
| | - ճանապարհաշինություն | 8400000 | |
| | - ջրամատակարարում/ջրահեռացում | 20284000 | |
| | - փողոցային լուսավորություն | | |
| | - գազամատակարարում | | |
| | - նախադպրոցական հաստատություններ | 1449935 | |
| | - հասարակական շենքեր | | |
| | - գույքի, տեխնիկայի ձեռքբերում | | |
| | - | | |
| **Համայնքի ծրագրի իրականացման տարվա միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված բյուջետային մուտքերի (ներառյալ՝ ֆինանսական համա- հարթեցման դոտացիայի գծով նախատեսված մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկ-ներով** | *Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի/ ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը/ հաշվին նստած ծրագիրը հնարավոր չէր իրականացնել, քանի որ բյուջետային մուտքերն ուղղվում են Տեղի համայնքապետարանի և ենթակա 4 համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների պահպանմանը/այդ թվում՝ աշխատավարձերի վճարում/ և համայնքի մյուս պարտադիր խնդիրների լուծմանը:*<br>*Տեղ համայնքի 2022թ բյուջեի ֆոնդային մասը կազմում է 37812000 ՀՀ դրամ, որից 5000000 ՀՀ դրամը կտրամադրվի 2022թ սուբվենցիոն ծրագրի իրականացմանը, այդ թվում՝ աշխատանքների իրականացում, շինարարական օբյեկտների նախագծում, նախագծա-նախահաշվարկային փաստաթղթերի պետական փորձաքննություն, տեխնիկական հսկողություն, շենք-շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննություն, վերանորոգում: 2450000 ՀՀ դրամ՝ Քարաշեն բնակավայրի վարչական շենքի բարեկարգում, 5284000 ՀՀ դրամ Տեղի ոռոգման ցանցի վերակառուցում, 4284000 ՀՀ դրամ՝ Կորնիձորի ոռոգման ներքին ցանցի վերանորոգում, 4500000 ՀՀ դրամ՝ Քարաշենի վարչական շենքի տանիքի վերանորոգում, 5500000 ՀՀ դրամ՝ Մելիք Բարխուդարի ամարաթի վերանորոգում և 11294000 ՀՀ դրամ նոր հացահատիկային կոմբայների ձեռք բերում:* | | |
| **Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝** | *20000000 ՀՀ դրամ (100%)* | | |

| | |
|---|---|
| - շինարարական օբյեկտների նախագծման արժեքը ________ դրամ,<br><br>- նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ ________ դրամ,<br><br>- տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ ________ դրամ,<br><br>- հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ ________ դրամ,<br><br>- գոյություն ունեցող շենք-շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության արժեքը՝ ________ դրամ,<br><br>ինժեներաերկրաբանական հետազոտության ծառայության արժեքը՝ ________ դրամ<br><br>ինչպես նաև առանձին ներկայացնել հասարակական շենքերի և բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման գույքի կառուցման/նորոգման դեպքում՝ էներգախնայողության միջոցառումների արժեքը ________ դրամ | *- շինարարական օբյեկտների նախագծման արժեքը 200000 ՀՀ դրամ,*<br><br>*-նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ 100000 ՀՀ դրամ,*<br><br>*- տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ 240000 ՀՀ դրամ,*<br><br>*- հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ 160000 ՀՀ դրամ,*<br><br>*գոյություն ունեցող շենք-շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության արժեքը՝ 140000 ՀՀ դրամ,*<br><br>*-ինժեներաերկրաբանական հետազոտության ծառայության արժեքը՝ 100000 ՀՀ դրամ* |
| *Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը* | *9,000,000 ՀՀ դրամ (45,000%)* |
| *Այլ ներդրողներ* | *Այլ ներդրողներ չկան* |
| *Ծրագրի իրականացման տևողությունը* | *Սկիզբ 01.04.2023թ.*<br><br>*Ավարտ 01.08.2023 թ.*<br><br>*Տևողությունը 120 օր* |
| *Ծրագրի ծախսերը* | *Ծրագրի ամբողջական ծախսերն ու նախագծա-նախահաշվարկային աշխատանքները կներկայցվեն ծրագրի հաջորդ փուլում:* |

| *Ամսաթիվ* | *06.07.2022թ.* |
|---|---|

**Այլ տեղեկություններ ծրագրի մասին** (նշել այն լրացուցիչ հանգամանքները, որոնք կարող են ցույց տալ ծրագրի կարևորությունը, ակնկալվող արդյունքների ազդեցությունը համայնքի և տարածաշրջանի զարգացման վրա, այլ հանգամանքներ, որոնք կարող են հաշվի առնվել ծրագիրը գնահատելու ընթացքում)։

**Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ ՝ Ա. Միրզոյան**
**Հեռ.098 55 10 97 Էլ.Հասցե՝ mirzoyan.1991@internet.ru**
**Տնտեսական զարգացման պատասխանատու ՝Ռ.Շեգունց**
**Հեռ.077 62 83 53 Էլ.Հասցե՝ shegunts.ruzanna@mail.ru**

---

Համայնքի ղեկավար **Դավիթ Ղուլունց**
(անունը, ազգանունը)

*Կ. Տ*